

ԸՂԶԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ
ԱՌԱՆՋԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԿԱՆ
ՆԱԽԱՂԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ,
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Եղանակն ավանդաբար դիտվում է որպես այնպիսի մի ձևաբանական կարգ, որը ժամանակի կարգի հետ մեկտեղ, իրականացնում է ստորոգելիական կարգերից մեկի գործառույթը: Եղանակի նման գործառույթի շնորհիվ իրականանում է նախադասության կառուցվածքային ակտը: Այս տեսանկյունից հարկավոր է դիտել եղանակը՝ որպես ձևաբանական-շարահյուսական կարգ, այսինքն՝ հարկավոր է տարբերակել եղանակի ձևաբանական և շարահյուսական տեսակները: *Ձևաբանական եղանակ* ասելով՝ պետք է հասկանալ այն ձևը, որը տարբերվում է բայի այլ եղանակներից թե ձևաբանական և թե շարահյուսական առանձնահատկություններով: Իտալերեն լեզվում, չնայած համանունության դեպքերին, բայի եղանակային ձևերը լավ տարբերակվում են մեկը մյուսից շնորհիվ թեքման: Համանուն են, օրինակ, սահմանական եղանակի II դեմք եզ. և հոգն. *-ere/-ire* վերջավորություններն ունեցող բայերի հրամայական ձևերը (օր.՝ *togliti* – *հանիր* / *ti togli* – հանում ես), թեև տարբերվում են *ti* եղանակի դիրքի շնորհիվ: Սիմոնեի բնորոշմամբ (Simone 1996: 341), անգլերենը կարելի է դիտել իբրև մեկ եղանակ ունեցող լեզու, այն է սահմանականը, քանի որ գրեթե միայն շարահյուսական առանձնահատկություններն են բնորոշում բայաձևերը (օր.՝ *see / you see*).

(1) *"When the passengers are cleaned up see if you can get this young lady..."*
(MacLean 1986: 132),

(2) *"It would be useful to talk in general terms about how you see the shape of the book," Peter said* (Taylor 1992: 73):

Փաստորեն, ինչպես երևում է, երկու դեպքում էլ բայաձևը մնում է նույնը, պարզապես հրամայական նախադասության մեջ ավելանում է *you* դերանունը: Հայերենում՝ որպես լավ զարգացած թեքական համակարգ ունեցող լեզու, բայի եղանակները հեշտությամբ տարբերվում են միմյանցից, ինչպես օրինակ՝

(3) *Երգում է քամին, լալիս է նորից, Անհույս ու անվերջ մղկտում է նա.* – (Տերյան 1985: 131) (սահմանական եղանակ),

(4) *...Սի՛ր՝ հուսահատվիր Փոթորկի դիմաց, Ծով-անապատում. Անհաղթ հավատով Կռվիր ու տանջվիր,* – (Իսահակյան 1973: 28)
(հրամայական եղանակ):

Ժամանակակից անգլերենը **Հադլսթոնի** կողմից (Huddleston 1984: 164) դասակարգվում է իբրև ձևաբանական եղանակից զուրկ մի լեզու: Վերլուծական եղանակն անգլերենում համադրվում է լավ զարգացած թեքական համակարգ ունեցող լեզուների *համադրական եղանակի* հետ, որոնցում եղանակները տարբերվում են միմյանցից թեքման շնորհիվ, որն էլ հենց նշանակությունները կամ էլ եղանակային կարգերը նշելու գործիքն է:

Շարահյուսական եղանակ հասկացությունը սահմանելու համար հարկավոր է որպես հիմք ընդունել ձևաբանական եղանակը և նրա գործառույթները եղանակային սխեմաների շրջանակներում: Մեկ եղանակային սխեման ներկայացնում է նախադասության այնպիսի մի տեսակ, որը կարող է ունենալ մեկ այլ տեսակ նախադասության նշանակություն, այսինքն՝ *նրանում* ձևաբանական եղանակը, բացի իր առաջնային նշանակությունից, կարող է ձեռք բերել նաև երկրորդական եղանակային նշանակություն: *Առաջնային նշանակություն* ասելով՝ պետք է հասկանալ այն դեպքը, երբ եղանակը դիտվում է իբրև ցանկացած տեսակ ասույթի բաղկացուցիչ գործիք ոչ շեշտված գործառույթում (օր.՝ իտալերենում՝ *Ci andrai / կգնաս*): Այս կարգի ասույթները կարող են արտահայտվել խոսակցին ապառնի գործողության մասին որևէ տեղեկություն հաղորդելու նպատակով, ուստի սահմանական ապառնին ծառայում է իբրև *շարահյուսական սահմանական*: Միևնույն ժամանակ, եթե ասույթն ունի խոսակցին որևէ գործողության դրդելու նպատակ, ապա սահմանական ապառնին հանդես է գալիս հրամայական եղանակի գործառույթով՝ ձեռք բերելով երկրորդական եղանակային նշանակություն (այսինքն՝ *կգնաս* ձևը գործածվում է *զնա* իմաստով): Շարահյուսական մակարդակից իմաստաբանական և գործաբանական մակարդակ անցում կատարելիս եղանակը կարող է համադրվել պարտադիր (էպիստեմիկ) և դեոնտիկ եղանակավորումների իմաստաբանական կարգերի հետ: Միևնույն ժամանակ, սակայն, հարկավոր է հաշվի առնել այն, թե որ իլլոկուտիվ ակտերն են նախընտրելի նախադասության մեջ (օր.՝ հնարավորությունը՝ կիրառելու հարցական ասույթը *հարցի, խնդրանքի, զգուշացման, անհամաձայնության* և այլ իլլոկուտիվ ակտեր իրականացնելու համար): Նախադասության տեսակը, ուսումնասիրվող որպես եղանակային սխեմայի իրականացում, բաղկացած է *քերականական գործիքներից*, այսինքն՝ եղանակից, *ոչ քերականական*, այսինքն՝ բառագիտական (եղանակավորող բայեր կամ մասնիկներ և եղանակավորող մակբայներ) և *հնչյունաբանական* (հնչեքանգ): Ինչ վերաբերում է ձևին, կարելի է խոսել նաև *վերլուծական եղանակի* մասին (օր.՝ **Հադլսթոնի** բնորոշմամբ, (Huddleston 1984: 164) անգլերենում վերլուծական եղանակ պետք է համարել եղանակավորող բայի (modal

auxiliary) կապը լիմնատ բայի հետ՝ նշելու համար դեոնտիկ անհրաժեշտությունը կամ հնարավորությունը (necessit(ā) deontica o possibilit(ā)) և պարտադիր (էպիստեմիկ) անհրաժեշտությունն ու հնարավորությունը: Իտալերենում այս տեսանկյունից հնարավոր է կապել տվյալ երկու նշանակությունները, այսինքն՝ հրամանի և թույլտվության, ձևաբանական հրամայականի գործածության հետ: Միայն մեկ բայածևի համադրության մեջ ընդգրկվում է այն ամենը, ինչն արտահայտվում է վերլուծական եղանակի կողմից անգլերենում: Հայերենում նույնպես կարելի է համադրել վերոնշյալ նշանակությունները ձևաբանական հրամայականի հետ, թեև իրավիճակն այստեղ մի փոքր այլ է, քանի որ ի տարբերություն անգլերենի և իտալերենի, կարելի է համադրել նաև *հրամանի* և *պարտավորվածության* նշանակությունները՝ բացատրելով, որ երկու դեպքում էլ խոսակիցը դրդված է որևէ գործողություն կատարելուն. օրինակ՝

- (5) ...ես *պիտի* թոչեմ դեպ սուրբ օրրանը Իմ վեհ խոհերի, Վառ ձգտումների (Իսահակյան 1973: 33) (պարտավորվածություն),
- (6) - Ասա ինձ իշխան, *կարո՞ղ եմ* ինքս նույնպես գալ Շահապիվան տոնի մասնակից լինելու... (EANC: Զորյան, Հայոց բերդը, 1959) (թույլտվություն),
- (7) *Անա կաց, ես կգնամ... Արի՛ ինձ հետ ...* (EANC: Փափազյան, Վեպեր) (հրաման, որը գործաբանական տեսանկյունից կարելի է նաև հասկանալ իբրև պարտավորվածություն, այսինքն՝ *պիտի գաս*, և թույլտվություն՝ *կարող ես գալ*):

Կարևոր է նաև նշել, որ իտալերենում հարկավոր է պահպանել ժամանակաձևերի համաձայնեցումը պարտադիր կերպով, մինչդեռ անգլերենում և հայերենում՝ ոչ: Հարցն այն է, որ անգլերենում ըղձական եղանակի ձևերն իրենց կառույցով նման են սահմանական եղանակի ձևերին (բացառությամբ III դեմք եզ. թվով արտահայտված ձևերի, որոնց դեպքում սահմանական եղանակում գործածվում է *ս* ցուցիչը, որը բացակայում է ըղձական եղանակում՝ God save the Queen / God saves the Queen):

Իտալերենում անկախ նախադասություններում ըղձական եղանակն արտահայտում է *ցանկություն, զգուշացում* և *ենթադրություն*, ինչպես օրինակ՝

- (8) "*Che tu sia sempre felice!*", mi ha detto guardando negli occhi. (Petrucci 2004: 112) (ցանկություն),
- (9) *Sento suonare. Che stia arrivando?* (Petrucci 2004: 159) (ենթադրություն),
- (10) *Vogliate farci pervenire il documento a stretto giro di posta* (Bocca 1993: 79) (զգուշացում):

Che շաղկապի առկայությունը հաճախ առաջ է քաշում այնպիսի մի վարկած, որ խոսքն իրականում գնում է երկրորդական նախադասությունների մասին, որոնք ինչ-որ կերպ մնացել են առանց գլխավոր նախադասության շարահյուսական աջակցության: Տվյալ երևույթը բացատրելու լավագույն տարբերակը սղումն է, և հաշվի առնելով այն փաստը, որ գլխավոր նախադասությունը մնում է ոչ հստակ և չի ուսումնասիրվում, երկրորդական նախադասությունը ստանձնում է գլխավորի դերը:

Անգլերենում ըղձական եղանակի անկախ գործածությունը դասակարգվում է հետևյալ դեպքերի.

1) գործածվում է բանաստեղծական ոճում, բարձրաոճ արձակ ստեղծագործություններում, գիտական արձակում և հազվադեպ պաշտոնական փաստաթղթերում (պայմանագրեր, հռչակագրեր և այլն).

(11) *Be all my sins remembered (Shakespeare) (Azizyan 2006: 114).*

(12) *"She works hard enough: saints help her, that you've no call to scold, Mairi Ban (BNC: Mary Frances Hendry, Quest for a babe, 1990, pp. 43-141)*
(ցանկություն),

2) որոշ պատրաստի արտահայտություններում կամ ֆիքսված նախադասություններում իրենց նմանօրինակներով իտալերենում և հայերենում, ինչպես օրինակ՝

ա) ըղձական իմաստով *ցանկություն* արտահայտելու համար (success attend you – *che ci sia il successo* – թող հաջողություն լինի; God save the King – Dio salvi il Re – Աստված պահի թագավորին; long live the bride and the groom – *կեցցեն* հարսն ու փեսան; long live our friendship – *կեցցե* մեր ընկերությունը; God bless you – Dio ti benedica – Աստված քեզ օրհնի; Heaven forbid – Santo cielo – Աստված չտա/չանի; so be it – *così sia* – թող այդպես էլ լինի; be that as it may / come what will – *sia quel che sia / accada quel che accada* – թող ինչ լինելու է լինի; be yours a happy marriage – թող ձեր ամուսնությունը երջանիկ լինի; if need be – *se ci fosse bisogno* – թե կարիքը լինի; if only – magari/se solo – երանի/միայն թե; till death do us part – *finché morte non ci separi* – մինչև որ մահը չբաժանի մեզ),

բ) *անեծքներ* և *հայիոյանքներ* արտահայտելիս (God damn (it) / confounded it / blast (it) – *caspita / mannaggia* – գրողը տանի / անիծվի դա): Հին անգլերենում ըղձական եղանակի գործածության ավելի շատ դեպքեր կային անիրական իմաստով *հնարավորություն*, *ցանկություն* կամ *երևակայական իրավիճակ* արտահայտելու համար: Դրանցից շատերն անհայտացել են ժամանակակից անգլերենում, քանի որ փոխարինվել են մոդալ բայերի տարբեր

ձևերի գործածությամբ (should, would, may և այլն): Նման նախադասությունների քանակը սահմանափակ է (May all your wishes come true!),

3) *հրամաններ* կամ *խնդրանքներ* արտահայտելու համար, երբ նախադասության ենթական հանդես է գալիս անորոշ դերանվամբ, ինչպես օրինակ՝ *somebody, everybody, one of you (Somebody ask him not to make noise)* կամ երբ նախադասությունը սկսվում է *let* մասնիկով.

(13) *Listen; let me start at the beginning...* (BNC: Michael Falk, Part of the furniture, 1991, pp. 1-146),

4) այնպիսի բացականչական արտահայտություններից հետո, ինչպիսիք են՝ *'How annoying / How strange / What a pity that smb. do not do smth. օր.*

(14) *"What a pity that you go back so soon.* (BNC: Kate Kingston, Surrey Richmond, A warning of magic, 1993),

(15) *How strange that from all the many places..., chance come up with Ardneavie* (BNC: Elizabeth Elgin, All the sweet promises, 1991, pp. 7-135),

5) պարզ նախադասություններում որոշ արտահայտությունների հետ (*had better; would rather; would sooner; had rather; had sooner*), ինչպես նաև պայմանական նախադասության կառուցվածք ունեցող պարզ նախադասություններում, որոնք ներկայացված են *if; if only; oh, if; oh, that* և այլ շաղկապներով.

5.1. *had better* արտահայտությունը կարող է արտահայտել.

ա) *խորհուրդ*՝ վերաբերող ապառնիին.

(16) *"Oh, well," he said finally, "you had better come in." He led them into a room overlooking an attractive courtyard...* (BNC: Ray Harrison, Patently murder, 1992),

(17) *Matthew flashed a dark look at her. "I had better go," he said abruptly.* (BNC: Mary Raymond, The divided house, 1985, pp. 1-236):

Հայերենում *խորհուրդ* արտահայտելու համար գործածվում են հետևյալ կառույցները՝ *ավելի լավ է / լավ կլիներ / լավ կաների...* + ըղձականի ապառնի կամ անցյալ ձևերը.

(18) - *Չի կարող պատահել, չեմ հավատում: Ավելի լավ է գործից խոսենք* (EANC: Խանգաղյան, Քաջարան),

(19) *Վախենում եմ ես ինքս ինձանից...* *Ավելի լավ է զնամ այստեղից...* (EANC: Սարյան, Դրամաներ),

բ) *սպառնալիք* այնպիսի նախադասություններում, ինչպիսիք են.

(20) *"You had better make sure, lady, or I send a message direct to Tracy."* *"No, please..." She stopped...* (BNC: Julia Byrne, Surrey Richmond, My enemy, my love, 1993):

Հայերենում այս դեպքում գործածվում են հետևյալ կառույցները՝ *լավ կանես, ավելի լավ է, լավ կաների* և այլն + ըղձականի ապառնի ձևը՝ վերա-

բերող ներկա/ապառնի համատեքստին (այս պարագայում ավելանում է նաև թե չէ արտահայտությունը՝ շեշտադրելու համար սպառնալիքը)։

(21) ...այստեղ հոգևորականի տեղ չէ, հոգևորականինը եկեղեցին է, լավ կանես՝ գնաս քո պաշտոնին (EANC: Պողոսյան, Հայ վարժապետ),

(22) Խնդրեմ իմ հոր պատվին չդիպչես, թե չէ պապերիդ ոսկորները մեկ-մեկ դուրս կբերեմ գերեզմանից ու քամուն կտամ (EANC: Շիրվանզադե, Ազգային գործիչը),

գ) հրաման.

(23) ...you had better avoid our territory, for we do not like weak eagles... (BNC: William Horwood, Callanish, 1992) (that is 'don't appear in our territory'):

Նաև այս պարագայում հայերենում գործածվում է լավ կանես + ըղձականի ապառնի ձևը՝ վերաբերող ներկա/ապառնի համատեքստին.

(24) Լավ կանես մնաս էստեղ, հորդ ծուխը ծխես... (EANC: Խանզադյան, Պատմվածքներ, 1958-1960),

5.2. would rather/would sooner արտահայտությունները գործածվում են ներկայի կամ ապառնի վերաբերությամբ.

(25) I would rather taste ash on my tongue than blood in my mouth. (BNC: Dennis Potter, Hide and seek, 1992),

(26) "I would rather not hear what she has to say since I imagine it is a tissue of lies, of excuses and complaints" (BNC: Margaret Forster, Lady's maid, 1990):

Մինչդեռ հայերենում այս կետին համապատասխանում է ոչ թե ըղձական, այլ ենթադրական եղանակը, օր.՝

(27) Եվ հիմա... չեմ կարող չխոստովանել քեզ, մտերիմ ընթերցող, որ կնախընտրեի միշտ նույն անցյալի խելառը լինել... (EANC: Փափազյան, Հետադարձ հայացք 2),

5.3. if only; oh, if; oh, that եղանակավորող բառերն արտահայտում են անիրական ցանկություն կամ ափսոսանք.

(28) If only we could bring it into focus, he wrote, if only we could concentrate hard enough... (BNC: Gabriel Josipovici, The big glass, 1991),

(29) "Oh if only I'd known! I'd have asked Mark to dinner... (BNC: Janet Tanner, Folly's child, 1991, pp. 13-124):

Հայերենում ցանկություն կամ ափսոսանք արտահայտելու համար անիրական, սակայն ցանկալի իրավիճակների դեպքում համապատասխանաբար գործածվում են երանի (թե), եթե միայն, միայն թե... (անկախ կիրառմամբ) և ափսոս, որ... արտահայտությունները։ Սակայն առաջին դեպքում կիրառվում է ըղձական եղանակը, մինչդեռ երկրորդում՝ սահմանականը.

(30) Այս, **երանի**~ տկար սրտին Սիրո նետեր **չդիպչեր**. **Երանի**~ թե աղքատ մարդին Սիրուց բաժին **չտրվեր** (EANC: Մուրացան, Պատմվածքներ, 1882-1886),

(31) - Շնորհակալ եմ, **ափսոս**, որ ձեր օգնությանը այլևս կարոտություն **չունեմ** (EANC: Բաֆֆի, Դավիթ Բեկ, 1882):

Երանի մասնիկը կարող է նաև բաց թողնվել:

(32) **Գնամ** Գյազբեկիս զմրուխտով **հարբեմ**. **Ելնեմ** երկինքոտ ժայռերը նրա Եվ ներշնչանքիս խորհուրդով **չափեմ** (EANC: Սահյան, Քարե պատարագ):

Կարելի է գործածել նաև *if only + would/could/might* արտահայտությունն ափսոսանք արտահայտելու համար.

(33) ...*But if only he would try some of his own tonic!* (BNC: Miss Read, The world of Thrush Green, 1990),

5.4. հարցական նախադասություններում, որոնք սկսվում են *what if...* արտահայտությամբ, ըզձական եղանակը գործածվում է ապատիկի վերաբերությամբ.

(34) *What if it didn't work out after all?* (BNC: Michael Falk, Part of the furniture, 1991):

Այս պարագայում հայերենում ըզձականը գործածվում է երկրորդական պայմանական նախադասություններում, թեև հնարավոր է նաև *իսկ եթե* ձևը պարզ նախադասության մեջ.

(35) **Իսկ եթե դեմ լինեիր...** (EANC: Զորյան, Վարազդատ):

Միևնույն *'as it were'* արտահայտությունը համապատասխանում է *այսպես ասած, կարծես* արտահայտություններին հայերենում.

(36) ...*since I am the one who has seen such a lot of it, as it were face to face* (BNC: Adele Geras, The green behind the glass, 1989),

(37) Եվ կամ թե սա, **կարծես Լինի մի կենտ կոշիկ երկայնաձիտ Որ թաղվել է կիսով ծովում Միջերկրական...** (EANC: Մևակ, Բանաստղծություններ):

Եվ այսպես, ինչ վերաբերում է անկախ նախադասություններին, ապա այստեղ ունենք հետևյալ պատկերը.

1) բացարձակ նույնականացում

ա) բանաստղծական ոճում, բարձրաոճ արձակ ստեղծագործություններում, պաշտոնական փասաթղթերում, թեև հազվադեպ,

բ) *հրամանների ու խնդրանքների* դեպքում (*qualcuno, uno di voi, tutti: smb., one of you, everybody*: թող ինչ-որ մեկը, ձեզանից մեկը, բոլորը) + ըզձական եղանակ,

գ) բացականչական նախադասություններում (*che noia/strano che/se; how annoying/strange; ինչ ձանձրալի է, որ*) + ըզձական եղանակ,

դ) *e se; what if; իսկ եթե* հարցերով սկսվող նախադասություններում + ըղծական եղանակ.

ե) *անհրաժեշտ ցանկություն* կամ *ափսոսանք* արտահայտող եղանակավորող բառերից հետո (*se solo, magari; if only; oh, if; oh, that; երանի (թե), եթե միայն, միայն թե*),

2) մասնակի նույնականացում

ա) *ցանկության, հայիտյանքի* նշանակություն ունեցող ֆիքսված արտահայտություններում (իտալերենում չի գործածվում),

բ) *խորհուրդ, հրաման, սպառնալիք* արտահայտող կառույցներում (*had better; would rather; would sooner; had rather; had sooner; ավելի լավ է / լավ կլինեք / լավ կանեի / լավ կանեիր / լավ կանես*) + ըղծական եղանակ (իտալերենում գործածվում է պայմանական եղանակը):

Փաստորեն, իտալերենի անկախ նախադասություններում ըղծական եղանակի գործածության դեպքերն ավելի քիչ են, քան հայերենում և անգլերենում:

Գրականության ցանկ

1. Ascoli C., Some pseudo-imperatives and their communicative functions in English. *Folia Linguistica* XII: 3-4. Mouton Publishers, The Hague, 1978
2. Azizyan S.A., Mood, Noyan Tapan, Yerevan, 2006
3. Battaglia S., Pernicone V., *La grammatica italiana*, Leoscher, Torino, 1990
4. Bybee J.L., Morphology. Mood. Benjamins, Amsterdam, 1985
5. Danesi M., *Complete Italian Grammar*, Review, Toronto, 2006
6. Dardano M. e Trifone P., *La lingua italiana*, Zanichelli, Bologna, 1985
7. Francesco B., *L'italiano: elementi di storia della lingua e della cultura*, UTET, Torino, 1987
8. Huddleston, R., *Introduction to the Grammar of English*. Cambridge University Press, Cambridge, 1984
9. Laudanna A., Gazzellini S. & De Martino M., Representation of grammatical properties of Italian verbs in the mental lexicon. *Brain and Language*, 2004
10. Lecch G.N., *Towards a Semantic Description of English*. London, Longman, 1969
11. Morenberg M., *Doing Grammar*, Oxford University Press, Inc., 1997
12. Moretti G.B., *L'italiano come seconda lingua*, Guerra Edizione, Perugia, 1994
13. Parrot M., *Grammar for English Language Teachers*, Cambridge University Press, 2003
14. Renzi L., Salvi G., Cardinaletti A. (a cura di), *Grande grammatica italiana di consultazione*, vol. III. Mulino, Milano, 1991
15. Serianini L., *Italiano*, Garzanti, Torino, 1997
16. Simone R., *Fondamenti di linguistica*. Laterza, Roma, 1996
17. Trifone P., *Grammatica italiana di base*, Zanichelli, Palermo, 2000
18. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի բերականություն, Ե., 1969
19. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Ե., 1974
20. Ադայան Է., Բարսեղյան Հ., Հայոց լեզու, դասագիրք, Ե., 1997
21. Աճառյան Հ., Հիպատար բերականություն հայոց լեզվի, հ. 6, Ե., 1971
22. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1983
23. Խլղաթյան Ֆ., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 2010

24. Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները ժամանակակից հայերենում, Ե., 1959
25. Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, 2-րդ մաս, Ա պրակ, Ե., 1980

Գնդարվեստական գրականություն

1. Bocca G., "Metropolis", Arnoldo Mondadori editore S.p.A., Milano, 1993
2. Calvino I., "Il sentiero dei nidi di ragno", Arnoldo Mondadori editore S.p.A., Milano, 1993
3. Eco U., "Il nome della rosa", Tascabili Bompiani edizione, Milano, 2007
4. MacLean A., "Santorini", HarperCollins Publishers Ltd. London, 1986
5. Petrucci F., "Uova di luce", 1 edizione, peQuod, Ancona, 2004
6. Pirandello L., "Sei personaggi in cerca d'autore", "Enrico IV", Arnoldo Mondadori editore S.p.A., Milano, 1948
7. Taylor A., "The raven on the water", Fontana Press, London, 1992
8. Խսահակյան Ա., "Երկերի ժողովածու", հ. 1. "Հայաստան" հրատ., Ե., 1973
9. Սարոյան Վ., "Վեպի Ջեքսոնի արկածները" և պատմվածքներ, հ. 3. "Սովետ. գրող" հրատ., Ե., 1988
10. Տերյան Վ., "Բանաստեղծություններ. լիակատար ժողովածու", "Սովետ. գրող" հրատ., Ե., 1985
11. <http://corpus.byu.edu/bnc/> (British National Corpus)
12. <http://www.eanc.net/EANC/search/> (Արևելահայերենի ազգային կորպուս)

Annotation

The article touches upon the semantic-functional characteristics of the subjunctive mood in independent clauses in Italian, Armenian and English. Here we speak about the notable difference between the morphological mood and the syntactic one, emphasizing that the morphological mood is defined as a form distinguished, both for the morphological and syntactic characteristics, from the other verbal moods, while to define the concept of the syntactic mood we should take as starting point the morphological mood and its functions within the limits of the modal schemes. One modal scheme represents a type of sentence that can be realized as a few types of statement. The comparative-contrastive analysis is given on the basis of the lexical-grammatical and semantic-functional characteristics of the subjunctive mood in Italian, taken as a source-language. By putting forward the similarities and the differences among the three languages, the usage of the subjunctive in independent clauses has been divided into 2 groups: **absolute similarity** and **partial similarity**, and come to the conclusion that the cases of the usage of the subjunctive mood in independent clauses are less in Italian than in Armenian and English.